

## Դասախոսություն 1.1. Առողջության իրավունք

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը տալիս է Առողջության հետևյալ սահմանումը՝

Առողջությունը դիտարկվում է իբրև «ֆիզիկական, հոգեկան և սոցիալական լիակատար բարեկեցության վիճակ, այլ ոչ թե միայն հիվանդության կամ հաշմանդամության բացակայություն»:

Մարդու առողջության իրավունքը երաշխավորված է մի շարք միջազգային և ներպետական փաստաթղթերով, մասնավորապես՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրով (ՏՄՄԻՄԴ), որին 1993 թ. միացել է Հայաստանի Հանրապետությունը, ՀՀ Սահմանադրությամբ, Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքով:

Դաշնագրի 12-րդ հոդվածը ասում է, որ յուրաքանչյուր ոգ ունի ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունք:

### Հոդված 12.

1. Սույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուր մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը:
2. Այն միջոցները, որոնք այդ իրավունքի իրականացման համար պետք է ընդունվեն սույն դաշնագրին մասնակցող պետությունների կողմից, ընդգրկում է միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են հանուն
  - a. մեռելաձնության և մանկական մահացության կրճատման ապահովման և երեխայի առողջ զարգացման,
  - b. արտաքին միջավայրի հիգիենայի և արդյունաբերության մեջ աշխատանքի հիգիենայի բոլոր կողմերի բարելավման,
  - c. համաճարակային, տեղաճարակային, պրոֆեսիոնալ և այլ հիվանդությունների կանխարգելման և բուժման, և դրանց դեմ պայքարի,
  - d. այնպիսի պայմանների ստեղծման, որոնք կապահովեն բժշկական օգնությունը և բժշկական խնամքը՝ հիվանդության դեպքում:

Առողջության իրավունքը սերորեն կապված է և կախված է մարդու մի շարք այլ իրավունքների իրականացման հետ, ինչպիսիք են սննդի, կացարանի, աշխատանքի, կրթության, մարդու արժանապատվության, կյանքի, խտրականությունից, խոշտանգումներից և անմարդկային վերաբերվունքից զերծ մնալու, անձնական կյանքի

## **ԲԱԺԻՆ 1. Պացիենտի իրավունքների եւ խտրականության վերաբերյալ ընդհանուր տեղեկություն**

անձեռնմխելիության, տեղեկատվության մատչելիության եւ միավորումներ կազմելու, հավաքների եւ տեղաշարժման ազատություններին վերաբերող իրավունքները:

Այն պատճառով, որ տարբեր պետություններ տարբեր կերպ են մեկնաբանում «ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակ» ձևակերպումը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն սովել է առողջության իրավունքի բաղադրիչների նկարագրերը և դրանց սահմանումները:

### ***Ըստ Կոմիտեի առողջության իրավունքի ունի հետևյալ բաղադրիչները՝***

1. Հասանելիություն
2. Մատչելիություն
3. Ընդունելիություն
4. Որակ

## **1. ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ**

Հասանելիությունը իրենից ներկայացնում է բժշկական ծառայությունների, ապրանքների, սարքավորումների, դեղորայքի և առողջապահական ծրագրերի բավարար քանակության առկայությունը երկրում: Անկախ երկրի զարգացման մակարդակից առողջության հիմնարար որոշիչները պետք է հասանելի լինեն, ներառյալ՝ անվտանգ խմելու ջուր, համապատասխան սանիտարական հարմարություններ, հիվանդանոցներ և այլ առողջապահական կառույցներ, համապատասխան կրթություն ունեցող բժշկական անձնակազմ, ովքեր ստանում են մրցունակ աշխատավարձ, ԱՀԿ-ի հիմնական դեղամիջոցների ցանկում ներառված դեղերը:

## **2. ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ**

Առողջապահական հաստատությունները, ապրանքները և ծառայությունները պետք է մատչելի լինեն բոլորի համար առանց խտրականության: Մատչելիությունը ունի 4 հիմնական որոշիչներ՝

(i) **Խտրականության բացառում.** առողջապահական հաստատությունները, ապրանքները և ծառայությունները պետք է հասանելի լինեն բոլորի համար, մասնավորապես առավել խոցելի և չներառված խմբերի՝ առանց օրենսդրական և գործնական խտրականության բոլոր պաշտպանված հիմքերով:

**ԲԱԺԻՆ 1. Պացիենտի իրավունքների եւ խտրականության վերաբերյալ ընդհանուր տեղեկություն**

(ii) **Ֆիզիկական մատչելիություն.** առողջապահական հաստատությունները, ապրանքները և ծառայություններինը պետք է անվտանգ և ֆիզիկական մատչելիության սահմաններում լինեն բոլորի համար, մասնավորապես առավել խոցելի և չներառված խմբերի, այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնությունների, կանանց, երեխաների, դեռահասների, տարեց մարդկանց, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց: Մատչելիությունը ենթադրում է, որ բժշկական ծառայությունները և առողջության այնպիսի որոշիչները, ինչպիսին են խմելու ջուրը և համապատասխան սանիտարական միջոցները գտնվում են անվտանգ ֆիզիկական հասանելիության մեջ, ներառյալ գյուղական վայրերը: Ֆիզիկական մատչելիությունը ներառում է ոչ միայն տեղաշարժի խնդիրներ ունեցող պացիենտների համար մատչելիության ապահովումանն ուղղված միջոցառումներ, այլ նաև հաշմանդամության այլ տեսակների հասցեավորումն: Օրինակ՝ լսողության կամ տեսողության խնդիրներ ունեցող պացիենտների համար մատչելիության ապահովումը:

(iii) **Տեստեսական մատչելիություն.** առողջապահական հաստատությունները, ապրանքները և ծառայությունները պետք է ֆինանսապես մատչելի լինեն բոլորի համար: Առողջության հետ կապված ծառայությունների դիմաց վճարները պետք է հիմնվեն հավասարության սկզբունքի վրա:



## ՀՈՒՇՈՒՄ

Տնտեսական մատչելիությունը չի նախատեսում բոլորին բոլոր տեսակի բժշկական ծառայությունների անվճար տրամադրում:

Համաձայն ՀՀ Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին օրենքի տնտեսական մատչելիությունը երաշխավորվում է հոսկյալ ձևակերպումամբ.

«Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկման տրամադրումն իրականացվում է պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում»:

Ներդնելով նպատակային ծրագրեր պետությունը երաշխավորում է անվճար բժշկական օգնություն բնակչության տարբեր խմբերի համար, օրինակ՝ առաջին կարգի հաշմանդամների, կամ տարբեր ծառայությունների ժամանակ, օրինակ՝ ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման և բուժման, մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման:

Անվճար ծառայությունների ծավալը սահմանվում է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչներով:

(iv) **Տեղեկատվական մատչելիություն.** սա իր մեջ ներառում է առողջության վերաբերյալ տեղեկատվություն և գաղափարներ որոնելու, ստանալու և տրամադրելու իրավունք: Մակայն տեղեկատվության մատչելիությունը չպետք է խախտի անձնական կյանքի իրավունքն ու բժշկական գաղտնիքը:

### 3. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

**Ընդունելիություն կամ ընդունելի լինելը.** առողջապահական հաստատությունները, ապրանքները և ծառայությունները պետք է համապատասխանեն բժշկական էթիկային, լինեն մշակութային ընդունելի՝ հարգեն անհատների, փոքրամասնությունների համայնքների մշակույթը, լինեն գենդերային զգայուն, հաշվի առնեն մարդկանց կյանքի ցիկլի առանձնահատկությունները:

#### **4. ՈՐԱԿ**

Առողջապահական հաստատությունները, ապրանքները և ծառայությունները պետք է համապատասխանեն գիտական և բժշկական չափանիշներին և լինեն բավարար որակի: Մա իր մեջ ներառում է համապատասխան որակավորում ունեցող բժշկական անձնակազմ, գիտականորեն հիմնավորված և ժամկետի մեջ դեղամիջոցներ, բժշկական սարգավորումներ, անվտանգ խմելու ջուր, համապատասխան սանիտարական միջոցներ: